

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա առթիվ

Հարգելի հայրենակիցներ

Շնորհավորում եմ ձեզ Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա առթիվ, մաղթում խաղաղ ու ապահով հայրենիք, աշխատանքային անսպառ եռանդ, նորանոր հաջողություններ:

Աշխատանքը եղել է մնում է մարդկային հասարակության առաջընթացի ու զարգացման այն հիմնական նախապայմանն ու արժեքը, առանց որի անհնար է պատկերացնել մերօրյա համաշխարհային քաղաքակրթությունը, տնտեսական ու գիտատեխնիկական նվաճումները, համամարդկային արժեքների կերտումը:

Հայ ժողովուրդն իր հազարամյակների պատմության ընթացքում շատ ու շատ դժվարություններ, թերեւս, հաղթահարել է նաև իր ստեղծարար աշխատանքով՝ կերտելով բնակավայրեր, պատմաճարտարապետական հուշարձաններ, տիրապետելով գյուղատնտեսության ու արտադրության մշակույթներին, արվեստի ու գիտության ճյուղերին:

Հիմա էլ աշխատանքն է մնում այն գլխավոր միջոցը, որի շնորհիվ բոլորս պետք է շարունակենք հայրենաշինության ուղին՝ զարգացնելով ու հզորացնելով մեր երկիրը: Մենք պետք է մեզ տրված յուրաքանչյուր պահն օգտագործենք արդյունավետորեն՝ խաղաղ ու արժանապատիվ, ներդաշնակ ու բարօր կյանքով ապրելու համար:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան